# ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

## *01.03.2021թ. նիստին*

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս. Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Ա. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն.Բաղդասարյանը, Լ.Պետրոսյանը
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

*Նիստն անց է կացվել հեռավար:*

***Հրավիրված էր՝***
Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն.Մուշեղյանը:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

**1. «2020 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/*

**Որոշեցին՝**
**հաստատել 2020 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:**

*/Անհայտական/*

***11.03.2021թ. նիստին***

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Ա.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն.Բաղդասարյանը, Լ.Պետրոսյանը
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

*Նիստն անց է կացվել հեռավար:*

***Հրավիրված էին՝***

Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ.Մարկոսյանը,
Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը:

**Լսեցին՝**

**1. «Կանանց առողջության և կենսափորձի մասին հետազոտության հարցաթերթը ու լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

**Որոշեցին՝**

**հաստատել «Կանանց առողջության և կենսափորձի մասին» հետազոտության հարցաթերթը, հարցաթերթի լրացման հրահանգը, համաձայն հավելված 1-ի և 2-ի:**
**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:**

*/Նորմատիվ/*

**Լսեցին՝**

**2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2018 և 2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին տրամադրելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշեցին՝**
**ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2018 և 2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները (այսուհետ՝ տվյալների բազաներ):**
**Սահմանել, որ տրամադրվող տվյալների բազաները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:**

*/Միահամուռ/*

**Լսեցին՝**
**3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2009-2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները վերլուծաբան Կարեն Սարգսյանին տրամադրելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշեցին՝**
**Միջազգային գիտահետազոտական (Internet in the Post-Soviet Area-Technological, Economic and Political Aspects) խմբի Հայաստանի ներկայացուցիչ Կարեն Սարգսյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2009-2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները (այսուհետ՝ տվյալների բազաներ):**
**Սահմանել, որ տրամադրվող տվյալների բազաները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:**

*/Միահամուռ/*

**Լսեցին՝**
**4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2010-2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշեցին՝**
**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2010-2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները (այսուհետ՝ տվյալների բազաներ):**
**Սահմանել, որ տրամադրվող տվյալների բազաները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:**

*/Անհատական/*

**Լսեցին՝**
**1.«Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2019 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշեցին՝**
**հաստատել որոշումն ըստ ներկայացված նախագծի:**

*/Անհատական/*

## *24.03.2021թ. նիստին*

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Ա.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն.Բաղդասարյանը, Լ.Պետրոսյանը
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

*Նիստն անց է կացվել հեռավար:*

***Հրավիրված էր՝***
Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը:

**Լսեցին՝**
**1.«Ժամանակի օգտագործման փորձնական հետազոտության տնային տնտեսության հարցաշարը, անհատական հարցաշարը, ժամանակի օգտագործման օրագիրը ու դրա լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

**Որոշեցին՝**
**հաստատել ժամանակի օգտագործման փորձնական հետազոտության տնային տնտեսության հարցաշարը, անհատական հարցաշարը և ժամանակի օգտագործման փորձնական հետազոտության օրագիրը ու դրա լրացման հրահանգը համաձայն հավելված 1-ի, 2-ի և 3-ի:**

*/Անհապական/*

## *05.04.2021թ. նիստին*

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Ա.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն.Բաղդասարյանը, Լ.Պետրոսյանը
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

*Նիստն անցել կացվել հեռավար:*

***Հրավիրված էր՝***
Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ.Արևշատյանը:

**Լսեցին՝**
**1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015թ. դեկտեմբերի 23-ի «Արդյունաբերական արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների (9-նիշ մակարդակ)» դասակարգիչը հաստատելու մասին» թիվ 14-Ա որոշման հավելվածը՝ նոր խմբագրությամբ հաստատելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Վ.Արևշատյան/*

**Որոշեցին՝**
**«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015թ. դեկտեմբերի 23-ի «Արդյունաբերական արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների (9-նիշ մակարդակ)» դասակարգիչը հաստատելու մասին» թիվ 14-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:**

*/Անհապական/*